Հաստատվում է՝ 30.08.2023թ.

Դպրոցի տնօրեն՝ /----------/ Ա. Գևորգյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

«Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ՏՆՕՐԵՆԻ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ
ՏԵՂԱԿԱԼ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

2. ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

1. Աշխատանքային գործառույթները՝

1) կազմակերպում և իրականացնում է Հաստատությունում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ.

2) համակարգում է մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները.

3) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

4) մասնակցում է Հաստատության մանկավարժական աշխատողների կողմից սովորողների աջակցության ծառայությունների տրամադրման և նրանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման գործընթացի կազմակերպման հարցերում.

5) աջակցություն է տրամադրում սովորողներին և ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների ու դժվարությունների հաղթահարման գործընթացում.

6) կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը.

7) ապահովում է հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը, կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով սովորողներին օգնություն ցույց տալու համար.

8) Հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն է ցույց տալիս ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում.

9) ընդհանրացնում և միջոցներ է ձեռնարկում դաստիարակչական գծով մանկավարժական աշխատողների արդյունավետ, սահմանված կարգով երաշխավորված փորձը տարածելու համար.

10) աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը.

11) հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ.

12) հսկում է Հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը.

13) կազմակերպում է ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպաստում հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը.

14) կանոնակարգում և կազմակերպում է երկարօրյա խմբերի աշխատանքները, կազմում է Հաստատության երկարօրյա խմբերի աշխատանքի կարգացուցակը և աշխատանքի տարեկան պլանը, ապահովում է սովորողների կյանքի և առողջության պահպանման համար անհրաժեշտ պայմանները.

15) մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:

2. Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները,

որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին» օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները,

գ. աշխատանքի անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության կանոնները, առաջին բուժօգնության հիմունքները, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները.

2) տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է կարողանա՝

ա. կազմակերպել սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը,

բ. ապահովել սովորողի ընտանիքի հետ դպրոցի սերտ կապն ու համագործակցությունը,

գ. կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը, նպաստել սոցիալապես անապահով և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման և դաստիարակության իրականացմանը,

դ. աջակցել և ուղղորդել աշակերտական խորհուրդների աշխատանքը, ստեղծել պայմաններ հաստատության հասարակական վերահսկողության իրագործման համար:

3. Որակավորման նվազագույն պահանջները՝

Հաստատության մասնագիտացված կրթական աջակցությունների աշխատանքի գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում:

1. Պարտադիր կրթության կենսագործում

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու
1.	Ուսումնական գործընթացի նախապատրաստում:Կազմակերպել ուսումնական գործընթացի վերահսկման ուղղված գործառույթները:	Օգոստոս-սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ՝մասնագիտացված կրթական աջակցությունների գծով,դասվար-դասղեկներ
2.	Դպրոցի տնօրենության կողմից սահմանել ըստ դասարանների դասագրքեր ստանալու ժամանակացույց և ապահովել պատշաճ իրազեկում:	Օգոստոսի 29-ից սեպտեմբերի 1-ը	Տնօրենի տեղակալ՝մասնագիտացված կրթական աջակցությունների գծով
3.	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ,ժամանակին կանխել դրանք,անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով, ԴԱԿ
4.	Ուշադրության կենտրոնում պահել անհատական աշխատանք պահանջվող աշակերտներին,բացատրական զրույցներ անցկացնել:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝մասնագիտացված կրթական աջակցությունների գծով
5.	Դասղեկների հետ ճշտել սոցիալապես անապահով երեխաների անվանացանկը,ապահովել նրանց օգտվել սահմանված զեղչերից:	Սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով
6.	Պարտադիր ուսման գործընթացի իրականացմանը,մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհրդին:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով , դասվար-դասղեկներ

2. Երեխաների իրավունքներ

1. Երեխաների սոցիալական և իրավական պաշտպանություն

- Ամրապնդել դասղեկ-աշակերտ –ծնող կապը:
- Պարբերաբար հետևել սովորողների դասաժամերին պատրաստվածությանը:
- Հետևողական աշխատանք տանել սովորողների ամենամյա բուժզննությունն անցնելու ուղղությամբ:
- Համագործակցել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ծնողների հետ:

2. Արտադպրոցական զբաղվածությունը, ազատ ժամանակի կազմակերպումը:

3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում և վերահսկում

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանա-տու
1.	Աշխատանք կատարել սովորողների վարքի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ,աջակցել դպրոցական ինքնավարությանը, հետևել ուշացումներին, ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով , դասվար-դասղեկներ
2.	Անհատական աշխատանքներ կազմակերպել շնորհալի,ստեղծագործող աշակերտների հետ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝մասնագի տացված կրթական աջակցությունների գծով , դասվար-դասղեկներ,ԴԱԿ
3.	Օգնություն ցույց տալ ուսումնադաստիարակչական աշխատանքների գործում: Ուսուցիչներին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով:	Օգոստոս-սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով
4.	Ստեղծել «Մասնագիտական կողմնորոշման թիմ»՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար:Աշխատանքներ տանել արդյունավետ փորձի կիրառման և տարածման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով , դասվար-դասղեկներ,ԴԱԿ

4. Սովորողների համակողմանի զարգացմանն ուղղված

աշխատանքներ

ա.Հայրենագիտական և հայեցի դաստիարակություն

բ.Հոգևոր,գեղագիտական,բարոյական,էկոլոգիական,իրավական,քաղաքացիական դաստիարակություն

գ.Աշխատանքային, ֆիզիկական, ռազմահայրենասիրական դաստիարակություն

Հ/հ	Աշխատանքային բովանդակություն	Կատարման ժամկետը	Պատասխանատու
1.	Բարձր դասարանի աշակերտների հետ կազմակերպել տեսանյութերի դիտում,զրույց- քննարկում՝ մարդկային հոգևոր, բարոյական ու արժեքները արժևորելու համար :	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝մասնագիտացված կրթական աջակցությունների գծով,դասղեկներ
2.	Համագործակցել դպրոցի բուժքրոջ հետ՝ աշակերտների ֆիզիկական և առողջական վիճակը գնահատելու նպատակով:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝մասնագիտացված կրթական աջակցությունների գծով
3.	Սովորեցնել՝ինչ է առողջ ապրելակերպը,երեխաների մոտ ճիշտ վարքականոն ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և սպորտի նկատմամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով,դասվար-դասղեկներ
4.	Զարգացնել աշակերտների կամային հատկանիշները , ձևավորել սեփական անձի թույլ կողմերի նկատմամբ քննադատական վերաբերմունք:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով
5.	Սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպել տեսանյութերի դիտում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին:	Դեկտեմբեր ամսվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով,դասղեկներ
6.	Տեսանյութերի դիտում ,զրույց-բանավեճեր՝ հանդուրժողականության և համագործակցության ձևավորման ուղղությամբ:	Նոյեմբեր ամսվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով,դասղեկներ

7.	Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝մասնագիտացված կրթական աջակցությունների գծով
8.	Բարձրացնել աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով
9.	Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ և ծանոթացնել աշակերտներին ազգային ավանդույթներին, հոգևոր արժեքներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով,դասղեկներ

5. Դասղեկական աշխատանք

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու
1.	Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման:	Սեպտեմբերի սկիզբ	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով, դասվար-դասղեկներ
2.	Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. 1.Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ: 2.Աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ դաստիարակել ազգային արժանապատվություն և հպարտություն:	Սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով, դասվար-դասղեկներ
3.	Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողական խորհուրդ՝ բաղկացած երկուսից -չորս հոգուց,ապահովել ծնողական խորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	Սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ՝մասնագիտացված կրթական աջակցությունների գծով, դասվար-դասղեկներ
4.	Կիսամյակը մեկ-երկու անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով:Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ –դպրոց – ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկույցներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝մասնագիտացված կրթական աջակցությունների գծով, դասվար-դասղեկներ
5.	Հայտարարել դասղեկական ժամերի թեմատիկ շաբաթներ հետևյալ թեմաներով՝«Մասնագիտական կողմնորոշում»,«Մեդիա գրագիտություն»,«Հանդուրժողականություն », «Ինքնագնահատում»,«Հաղորդակցական հմտությունների զարգացում» և այլ թեմաներով:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով, դասվար-դասղեկներ
6.	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Ամիսը մեկ անգամ հրավիրել դասղեկների խորհրդատվություն:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ՄԿԱ գծով , դասվար-դասղեկներ
7.	Կազմակերպել դասղեկների և առարկաների ուսուցիչների	Ըստ անհրա-ժեշտության	Տնօրենի տեղակալ՝ՄԿԱ գծով ,

	համագործակցություն՝ ծրագրային նյութերի և դաստիարակչական բաղադրիչի արդյունավետ ինտեգրման նպատակով:		դասղեկներ,ուսուցիչներ

6. Արտադասարանական խմբակներ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու
1.	Համակարգել և վերահսկել «Հելունագործություն» և «Երգարվեստ» խմբակների աշխատանքները:	Պարբերաբար	Տնօրենի տեղակալ՝ ՄԿԱ գծով
2.	Օգնել խմբակի ղեկավարներին՝ կազմելու խմբակների տարեկան հաշվետություն:	Ուստարվա ավարտին	Տնօրենի տեղակալ՝ՄԿԱ գծով,խմբակի ղեկավարներ
3.	Անցկացնել թեմատիկ միջոցառումներ և իրականացվող ծրագրերի համաձրմամբ մասնակցել համադպրոցական միջոցառումներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ՝ՄԿԱ գծով,ԴԱԿ,խմբակի ղեկավարներ

7. Աշխատանք ծնողների հետ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու
1.	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,դասվար-դասղեկներ
2.	Հրավիրել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր:	Սեպտեմբեր	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,դասվար-դասղեկներ
3.	Ձևավորել դպրոցի ծնողական խորհուրդ, օժանդակել ծնողական խորհրդի աշխատանքների պլանավորմանը: Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների և սեմինարների թեմատիկ պլան և իրականացնել հետևյալ թեմաներով՝ • «Դաստիարակման դրական մոտեցումների հիմնական սկզբունքները» • «Բազմազանություն և հանդուրժողականություն» • «Երեխաների առցանց պաշտպանություն» • «Կրթության իրավունքը՝ որպես երեխայի զարգացման իրավունք» • «Սովորելու հետ կապված դժվարությունների մասին» • «Ինչպե՞ս կարող են ծնողները կանխարգելել բռնությունը» • Ծնող - երեխա հարաբերությունները» • «Դեռահասներին զերծ պահել վատ սովորույթներից » • «Ընդլայնենք երեխաների հետաքրքրությունների շրջանակը»	Սեպտեմբեր Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ

4.	Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,դասվար-դասղեկներ
5.	Կազմակերպել հանդիպումներ «Ուսուցիչ-ծնող համագործակցություն՝որպես ուսուցման արդյունավետության գրավական»: ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ սեմինար հանդիպումներ, քննարկումներ,զրույցներ հետևյալ թեմաներով՝ • «Ճանապարհ դեպի ապագա» • «Տուր ինձ քո ձեռքը,և ես կհասնեմ արևին» • «Կոտրենք արգելքները,բացենք դռները» • «Բոլորը՝տարբեր,բոլորը՝հավասար»	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, դասվար-դասղեկներ
6.	Ծնողների հետ մշակել և կազմակերպել գործողությունների պլան արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման համար :	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, դասվար-դասղեկներ
7.	Հանդիպումներ ծնողների հետ ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման ուղղությամբ:	1-ին կիսամյակի ընթացքում	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,դասվար - դասղեկներ

8. Աշխատանք աշակերտական խորհրդի հետ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու
1.	Անցկացնել նոր ուսումնական տարվա առաջին աշակերտական ընդհանուր ժողովը,որի ընթացքում ընտրել դպրոցի աշակերտական խորհրդի և դասարանական ինքնավարության մարմինների ընտրություններ կազմակերպող նախաձեռնող խումբ 6-12-րդ դասարաններից:	Սեպտեմբեր	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,ԴԱԿ
2.	Անցկացնել դասարանական ընդհանուր ժողովներ և ընտրել դասարանական խորհուրդներ:	Սեպտեմբեր	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,դասղեկներ
3.	6-12-րդ դասարանների ներկայացուցիչներից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրել աշակերտական խորհրդի նախագահ:	Մինչև սեպտեմբերի 20-ը	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,ԴԱԿ
4.	Հաստատել աշակերտական խորհրդի 2023-2024 ուստարվա պլանը:	Սեպտեմբեր	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ
5.	Օգնել աշակերտական խորհրդին հանձնախմբեր ստեղծելու,նրանց գործունեությունը կազմակերպելու ուղղությամբ:	Սեպտեմբերի 22-ից 30-ը	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,ԴԱԿ
6.	Լսել հաշվետություններ հանձնախմբերի կատարած աշխատանքների մասին և օգնել տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,ԴԱԿ